

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ

ՀԵՌԱԳԻՏՐՆԵՐ

Ս. Արուրյան Գեր. Տեղապահ Հայրը հետեւեալ հեռազիր ստացած է Ս. Էջմիածնի Գերաքանի Հոգեւոր Խոհուրդին.

ԳԵՐ. 8. ԵՂԻԾԻ ՎՐԴ. ՏԻՐՑԻՔԵՍԱՆ

Տեղապահ Առաքելական Ս. Արուրյան

Ս. Երևանադիմի

Նորին Ս. Օծուրիւն Վեհ. 8. 8. Գևորգ Զ. Ամենայն Հայոց Մրգնական Կարողիկասի Յօրիկանի տօնակատարուրիւնը յետաձուած է: Յօրիկանի տօնակատարուրեան օրը պիտի հաղորդուի:

Գեր. ՀՈԳԵՒԽՈՐ ԽՈՇՀՈՒՐԴ

Ս. Էջմիածնին

25 Սեպ. 1950
Երևան - Հայոստան

Ամենայն Հայոց Տ. Տ. Գևորգ Զ. Վեհ. Հայրապետ Անուանակարչութեան տօնին առիրավ, Ս. Արուրյան Գեր. Տեղապահ Հայրը հետեւեալ տօնակատարական հեռազիր ստացած է Նորին Ս. Օծուրեան.

Ն. Ս. Օծուրիւն Վեհ. 8. 8. Գևորգ Զ.

Կարողիկոս Ամենայն Հայոց

ի Ս. Էջմիածնին

Զերդ Վեհափառուրեան Անուանակալուուրին աօնին առրիւ, Ս. Ցակորեանց Մայր Թանարին մէջ տեղի պիտի ունենայ հանդիսաւուր Ս. Պատարագ իւ Հայրապետական մտղրանք: Ի որտեւ կը շնորհաւուրեն Զերդ Ս. Օծուրիւնը հայցելով Ամենակալէն՝ որ Զերդ Ս. Օծուրիան շնորհէ երկու իւ երջանիկ կեանք, իսկ մեր Ս. Եկեղեցին իւ պանծալի Հայրենիքին բարգաւանում:

ՏԵՂԱԿԱՆ Ս. ԱՅՈՒՅՈՅ
ԵՂԻԾԻ ՎՐԴ.

21 Սեպ. 1950
Ս. Արու. Երևանադիմի

ՀՈԳ. 8. Ա.ՍՈԳԻԻՆ ՎՐԴ. Դ.ԱԶԱՐԵՍԱՆ

ՄԵՐ ՄԵՐ

1950 Յուլիս 27-ին, Հինգշաբթի օր, երեկոյան ժամը 4.30-ին Ս. Աթոռ ժամանեց Միարանական Ուխտիս անդամներէն՝ Զինաստանի Հայ գաղութին հոգեւոր հովիլ՝ Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան: Հոգեւնորհ Հայրը Յուլիս 16-ին 2ին աստանէն հասած էր Խորայէլ, ու ամբողջացը նելէ ետք կարգ մը անցագրային գործողութիւններ, այսօր, վերջնականապէս կ'անցնի Ս. Աթոռ: Մինչև Խորայէլի Երուատղէմեան սահման իրեն զիմաւորութեան գացեր էին Հոգեւնորհ Տ. Տ. Հայկացուն եւ Յարութիւն վարդապետներ, եւ Հոգ. Տ. Գարեգին Արեգայ:

Հոգ. Տ. Ասողիկ Վրդ. Ղազարեան 1937 թւականին Երանականորհ Տ. Մորգոմ Պատրիարքի արտօնութեամբ մեկնած էր որպէս հոգեւոր հովիլ Զինաստանի Հայ գաղութին: Կը վերադառնայ 13 տարիներու շատ արդիւնալից պաշտօնավարութենէ մը ետք, իր հեղանամբոյր բնաւորութեամբ գրաւելով լայն համակրանքը իր հօտին:

Ուրախասուիթ պարագայ մըն է իր ներկայութիւնը Ս. Աթոռէն ներս, տրուած ըլլալով իր պատրաստուած հոգեւորականի նկարագրին հետ նաև իր լայն սէրը ու նուիրումը հանգէպ Ս. Աթոռին:

ԱՄՍՈՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

● 3 Սեպտ. Կիր. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մըր վերջնատան Երաշխաւոր Ս. Աստուածածին մատուան մէջ: Պատարագին էր Ս. Յարութեան տեսուչը՝ Հոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

● 4 Սեպտ. Բ.՝ — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը պաշտրւեցաւ Ս. Ցակորեանց Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Հոգ. Տ. Սուրէն Վրդ. Քէմաննեանի:

● 5 Սեպտ. Գ.՝ — Ս. Ցակալիմայ և Աննայի, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Գեթօւեմանի Ս. Աստուածածնայ տաճարին մէջ՝ Հայր Յովսէփի զերեզմանին վրայ: Պատարագին էր Տաճարին տեսուչը՝ Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գաղան ճեան:

● 7 Սեպտ. Ե.՝ — Կ. ա. ժամը 10.15-ին, Գեր. Տեղապահ Հօր այցելեցին Social Welfare տնօրէն Տիար Յ. Նաշաշիպի և իր օգնականը Տիկին Նասըր:

● 8 Սեպտ. Ուրբ. — Կէսօրէ առաջ ժամը 10.30-ին, Ս. Քաղաքէս զէսի Պաղտատ մեկնեցաւ Գեր. Տ. Խուրէն Ս. Արքեպոս Մանասեան:

— Կէսօրէ առաջ ժամը 10.30-ին, Գեր. Տեղապահ Հօր այցելեց Երուատղէմի Վահեմ. Մութաքարը ինսան Պէյ Հաշէմ:

● 9 Սեպտ. Եր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին նախատօնակը կա-

տարուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Նախագահութեամբ Հոգ. Տ. Առւրէն Վրդ. Քէմաննանի:

● 10 Մելքոն. Կիր. — Գիւտ Գօւույ Ա. Աստվածածնի, առաւօտուն, Նախագահութեամբ Հոգ. Տ. Առւրէն Վրդ. Քէմաննանի՝ վարդապետ հայրեր, պաշտօնական թափօրով իջան Գեթսեմանիի Ա. Աստվածածնայ տաճար, ուր Խառուեցուեցաւ հանդիսաւոր Ա. Պատարազը: Պատարազիչն էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեան:

● 11 Մելքոն. Բշ. — Ժառ. վարժարանի և Ընժայարանի ասներն ու սարկաւագները զիմաւրութեամբ վարժարանի առժամեայ տեսուչ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեանի մեկնեցան գէպի Խըսէյֆա գիւղը, ուր երեք օրեր շարունակ տեղի ունեցան — զիւղի ժամատան մէջ — եկեղեցական պաշտամունք, իսկ վերջն օրը՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեան մատոյց Ա. Պատարազը: Այս առթիւ Հաղորդուեցաւ զիւղակին ամբողջ հայ ընակութիւնը անխտիր, Հոգ. Հայրսուրբը խօսեցաւ նաև կուռ ու ներշնչող քարոզ մը: յօրդորելով այս հեռաւոր զիւղակի միայնութեան մէջ ապրող հայորդիները հաւատարիմ Թալու իրենց Մայրենի սկզբեցւոյն եւ ազգին: Հոգեշնորհ Հայրսուրբը եւ աշակերտներ երեք օրեր շարունակ եղան բաղձալի հիւրերը տեղւոյն հայ հասարակութեան, վայելով անոնց չերմ հոգածութիւնն ու սէրը:

● 14 Մելքոն. Եշ. — Յետ-միջօրէի ժամը 8-ին Դեր. Տեղապահ Հայրը, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեանի, Հոգ. Տ. Գարեգին Արեղայ Գաղաննեանի և Տիար Կարպիս Հինդեցանի մեկնեցաւ Խօրայէլ:

● 17 Մելքոն. Կիր. — Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատրան մէջ: Պատարազիչն էր Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան:

— Կէսօրէ առաջ ժամը 9-ին, Դեր. Տեղապահ Հայրը՝ Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արեղայ Գաղաննեանի և Տիար Կարպիս Հինդեցանի, իրայէլէն վերապարձաւ Ա. Ալուս: իսկ Հոգ. Տ. Տրդատ Վրդ. Պէրպէրեան՝ Պատարազիչն Պատարազը գործութիւն մէջ առաջմամբ Հայքայի հայ գաղութիւն Հոգ. Հովիւն շանակուած ըլլաւով՝ մնացած է խօսայէլ:

● 20 Մելքոն. Եշ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին Նախատօնակը պաշտեւեցան Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Նախագահութեամբ Հոգ. Տ. Առւրէն Վրդ. Քէմաննանի:

● 21 Մելքոն. Եշ. — Ծնունդ Ա. Աստվածածնի, առաւօտուն, Հոգեշնորհ վարդապետ հայրեր՝ Նախագահութեամբ Հոգ. Տ. Առւրէն Վրդ. Քէմաննանի, պաշտօնական թափօրով իջան Գեթսեմանիի Ա. Աստվածածնայ տաճար: ՀՀարավառութիւնը մուտքէն ետք՝ հանդիսաւոր Ա. Պատարազը մա-

տուցուեցաւ Տիրամօր զերեզմանին վրայ: Պատարազեց և քարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեան: Ա. Պատարազէն վերջ, պաշտօնական թափօրով վարդապետ հայրեր վերադարձան մայրավանք:

● 22 Մելքոն. Աւրը. — Կէսօրէն առաջ, Հոգ. Տ. Առւրէն Վրդ. Քէմաննան, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեանի, ի դիմաց Դեր. Տեղապահ Հօր, մեկնեցաւ Ամմանի արքունիք և շնորհաւորեց վեհ: Ապտալլահ թաղաւորը պայրամի տօնին առիթով:

— Նոյն օրը, Դեր. Տեղապահ Հայրը Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեանի, Հոգ. Տ. Գարեգին Արեղայ Գաղաննեանի և Տիար Կարպիս Հինդեցանի՝ պայրամի առթիւ շնորհաւորական այցելութիւն տօւաւ աւագ քարտուղար Վահեմ: Ճէմալ Պէտրոս քանի, Երուսաղէմի վսեմ: Մութասարբին և ոստիկանապետին:

● 23 Մելքոն. Եր. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին հանդիսաւոր Նախատօնակը պաշտօնեցան Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր: Եթե Նախատօնակի մեծահանգէս թափօրով Ա. Խաչափայտի մասունքը՝ Ա. Գլխաղըի մատուէն աւագ խորան փախազրուեցաւ ձեռամբ Գեր. Տեղապահ Հօր: Երեկոյեան «Եկեսից» և Հակման արարողութիւնները կատարուեցան Մայր Տաճարին մէջ:

● 24 Մելքոն. Կիր. — Տօն Վերացման Ա. Խաչին: հանդիսաւոր Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Եպիսկոպոսական խոյը ի զուրխ պատարազեց Հոգ. Տ. Առւրէն Վրդ. Քէմաննան: Փարոզեց Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեան, վեր հանելով Ա. Խաչի փըրկարար խորհուրդը: Ա. Պատարազի ընթացքին կատարուեցաւ Հայքապետական մաղթանք վեհ: Տ. Տ. Գէորգ Ամենայն Հայոց կաթողիկոսին անուանակոչութեան տօնին առթիւ (ըստ Նոր Տոմարի): Ցետ Ա. Պատարազի տեղի ունեցաւ հոգեհանգստան պաշտօն Ա. Աթոռոյ բարերաբներ Մելգոննեան հարազատոներու հոգիներու հանգստան համար: Երեկոյեան՝ Նախագահութեամբ Գեր. Տեղապահ Հօր կատարուեցաւ մեծահանգէս «Անդաստան»ը, Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան խուռներամ բազմութեան:

● 25 Մելքոն. Եշ. — Յիշատակ մեռելաց. Ա. Պատարազը Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատուց Հոգ. Տ. Նորայր Վրդ. Պօլարեան: Որմէ յետոյ թափօրական գնացքով հոգինանդիստ կատարուեցաւ Երանանորհ Տ. Կիւրեղ Ա. Պատարիարք Հօր գերեզմանին վրայ, ինչպէս նաև կրատան և Զամթաղը հոգազմաններու վրայ:

● 26 Մելքոն. Եշ. — Կէսօրէ առաջ ժամը 11-ին Դեր. Տեղապահ Հօր այցելեց Երուսաղէմի Անկելիքան եպիսկոպոս Գեր. Տ. Ասուարը: